ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը
ՀՀ, ք.Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք

Դիմումատու՝_____
անձնագիր_____, տրված _____կողմից, _____թ
Հաշվառման/բնակության հասցե _____
Հեռախոս_____

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄ

ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության հարգելի աշխատակազմ,

<u>ԴԻՄՈՒՄԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ</u>

1. ___-5-2026 ԿԸՀ կայքում որոնման ընթացքում Ես հայտնաբերել եմ, որ բացակայում է իմ անունը ՀՀ ընտրողների ցուցակում:
2. Հայաստանի Հանրապետությունում 2026թ հունիսի 7-ին տեղի են ունենալու ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրություններ:
3. Վկայակոչված ընտրությունների օրը գտնվելու եմ ՀՀ-ում՝ իմ գրանցման/ հաշվառման հասցեում:
4. Ունեմ ՀՀ քաղաքացու անձնագիր՝ «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքի 4-րդ հոդվածի իմաստով բավարար ապացույց՝ իմ քաղաքացիությունը ապացուցելու վերաբերյալ:

<u>ԴԻՄՈՒՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ</u>

Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Սահմանադրության 48 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 2 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրության օրը (այսուհետ՝ քվեարկության օրը) 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Նույն օրենքի 3 հոդվածի համաձայն՝ ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:

«Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանշիների մասին» Քիշնևի 07.10.2002 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝

«1. կողմերն ընդունում են, որ ժողովրդավարական ընտրությունների չափանիշներն են պետական իշխանության, տեղական ինքնակառավարման, ժողովրդավարական (ազգային) ներկայացուցչական այլ մարմիններում քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքը՝ ընդհանուր, հավասար, ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ, ընտրողների կամքի ազատ արտահայտումն ապահովող պարբերական ու պարտադիր, արդար, իրական և ազատ ընտրությունների սկզբունքները, ընտրությունների թափանցիկ և հրապարակային բնույթը, մարդու և քաղաքացու ընտրական իրավունքների և ազատությունների դատական և այլ պաշտպանության, ընտրությունների հասարակական և միջազգային դիտարկման իրականացումը, ընտրական գործընթացի մասնակիցների ընտրական իրավունքների և ազատությունների իրականացման երաշխիքները:

3. Քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքը ամրագրվում է Սահմանադրությամբ և (կամ) օրենքներով, իսկ դրա իրականացման կարգը սահմանվում է օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով: Ընտրելու և ընտրվելու իրավունքի, ընտրությունների կարգի (ընտրական համակարգերի) օրենսդրական կարգավորումը, ինչպես նաև ընտրական իրավունքների և

ազատությունների սահմանափակումները չպետք է սահմանափակեն կամ չեղյալ համարեն մարդու և քաղաքացու հանրաճանաչ իրավունքներն ու ազատությունները և դրանց իրականացման սահմանադրական և (կամ) օրենսդրական երաշխիքները կամ կրեն խտրական բնույթ:

6. Ընտրությունների օրինական և հրապարակային բնույթը ընտրություններին մասնակցող քաղաքացիների, թեկնածուների, քաղաքական կուսակցությունների (դաշինքների) ընտրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ու իրականացումը, իրավակիրառ պրակտիկայում ընտրական գործընթացի կազմակերպման սահմանադրական սկզբունքների իրականացումն ապահովվում է դատական, վարչական և պաշտպանության այլ միջոցներով»:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի պահպանում նշանակում է հետևյալը. Սահմանադրությամբ, օրենքներով սահմանված տարիքը լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ընտրելու և ընտրվելու պետական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմիններում, ժողովրդական (ազգային) ներկայացուցչական այլ մարմիններում, ընտրովի պաշտոններում՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պայմաններով և կարգով:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ հավասար ընտրական իրավունքի սկզբունքի պահպանում նշանակում է հետևյալը. յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն կամ մյուս քաղաքացիների հետ հավասար ձայներ և մյուս քաղաքացիների հետ հավասարապես իրավունք ունի՝ իրականացնելու իր քվեարկելու իրավունքը, ընդ որում՝ նրա ձայնը (ձայները) ունի նույն ազդեցությունը, ինչ մյուս ընտրողների ձայները, ընդ որում՝ պետությունում կիրառվող ընտրական համակարգը չպետք է ազդի ընտրողի ձայնի (ձայների) ազդեցության վրա:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդար ընտրությունների սկզբունքի պահպանումը պետք է ապահովի հավասար իրավական պայմանների ստեղծում ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների համար, իսկ 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ արդար ընտրությունների անցկացման ժամանակ ապահովվում է ընդհանուր և հավասար ընտրական իրավունք:

<u>Կոնվենցիան Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ է մտել 17-03-2005 թվականին:</u>

<u>ԴԻՄՈՒՄՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋԸ</u>

Վերոգրյալով ակնհայտորեն հիմնավորվում է, որ Ես՝ որպես ՀՀ քաղաքացի, ով ունի ՀՀ քաղաքացու անձնագիր՝ «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքի 4-րդ հոդվածի իմաստով բավարար ապացույց՝ իմ քաղաքացիությունը ապացուցելու վերաբերյալ, դրանով պայմանավորված ունեմ Ազգային ժողովի հերթական ընտրությանը անխոչընդոտ մասնակցելու Սահմանադրական երաշխիք, հետևաբար իմ անունը և տվյալները պետք է ընդգրկված լինի համապետական ընտրությունների մասնակցելու իրավունք ունեցող անձանց՝ ընտրողների ցուցակներում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝

ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունից

պահանջում եմ

ընդգրկել ինձ ընտրողների համապետական ցուցակում, իսկ սույն դիմումի մերժման պարագայում՝ պատճառաբանել մերժման հիմքերն ու հիմնավորումները:

Հարգանքով՝ _____ __/05/2026

Կցում եմ անձը հաստատող փաստաթղթի պատճեն: